ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

(Հեռագրով)

Շուշի, 5 հոկտեմբերի

Հ. Առաքելեանին, Թիֆլիս.

Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, ընտրելով Ձեզ իր ներկայացուցիչ, խնդրում է Ձեզ բարեհաճել գնալ Էջմիածին, մասնակցել իր կողմից յօբելեանական հանդէսներին, լինել արտայայտիչ մեր բերկրութեան զգացմունքների՝ հայ ազգի պատմական հռչակաւոր օրվայ տօնախմբութեան առիթով։

Նախագահ հոգաբարձութեան՝ կառավարիչ Ղարաբաղի թեմի՝ Զաւէն վարդապետ

—

(Հեռագրով)

Շուշի, 5 հոկտեմբերի

Տիգրան Նազարեանին, Թիֆլիս

Ղարաբաղի թեմի ծխական ուսումնարանների անունից խնդրում եմ լինել պատգամաւոր, բարեհաճել ներկայ լինել Էջմիածնում յօբելեանական հանդէսներին, արտայայտելով Ղարաբաղի թեմի դպրոցների կողմից խնդակցութիւն պատմական այս նշանաւոր օրվայ առիթով։

Ղարաբաղի թեմ. կառավարիչ՝

Զաւէն վարդապետ

—

Կ. Պոլիս, 28 սեպտ.

Ազնուաշուք Տիար

Համբարձում Առաքելեան, նախագահ Միացեալ Ընկերութեանց Կովկասի Օժանդակ Յանձնաժողովի.

Տնօրէն ժողովս նուիրական պարտք մը նկատելով իբրև Թիւրքահայաստանի մէջ գործող կրթական բարձրագոյն մարմին իր վայելուչ ու արժանաւոր բաժինն ունենալ հայ գրերու գիւտի ու հայ տպագրութեան համազգային յօբելեանին մէջ, որ հոկտ. 12-ի ու 13-ի օրերը յաջորդաբար կը տօնուի նախ ս. Էջմիածնի և ապա Թիֆլիսի մէջ, կուգայ ներկայիս խնդրել Ձեզմէ, որ բարեհաճութիւնն ունենաք պաշտօն ստանձնել իբրև մեր Կովկասի մասնաճիւղին նախագահը՝ «Միացեալը» ներկայացնելու այդ մեծահանդէս արարողութեանց մէջ, որուն կը մասնակցի բովանդակ հայութիւնը։

Կանխելով այս մասին մեր ջերմագին շնորհակալեաց հաւաստիքը, կը մնանք՝

Խորին յարգանօք

Ի դիմաց Հայոց Միացեալ Ընկ.

Տնօրէն ժողովոյ

Ատենապետ՝ Ա. Պ. Շմաւոնեան

Ատենադպիր՝ Հ. Իսագուլեան